Մայրս, գարնան ամիս, արեգակն իր շողերով կեանք է յորդում մեր երկրին, ծաղիկում է բնութիւնը, ծաղիկում է մարդու հոգին: Մտիր ցորենի արտեր, նայիր ծաղկած ցորենի հասկերին, շոյիր նրանց, բնութեան մայրութիւնը պիտի սարսալք ջու սրտում: Մտիր պարտէզներ, ծաղիկների ծիածան ծովակների ալեակներն են ծփում, ժպտում են նրանք երկնի կապոյտին, ժպտայ նրանց, թող սիրտդ խայտայ բնութեան հրաշքով: Խայիր ինչպէս են արեւի ճառագայթները իջել ծառերին, համբուրելու ծաղիկների ծիածանացած շրթները: Մտիր անտառներ, նայիր ինչպէս են նրանք իրենց կանաչագարդ թեւերը պարզել երկնի կապոյտը գգուելու: Բնութեան հրաշափառ արարման խորհուրդն է, հողի սրբագործ արարչութիւնն է այս, եւ այն կոչում ենք մայր բնութիւն, մայր հող, մայր հայրենիք՝ որպէս մայրութեան սրբագնացում:

Մայրերը իրենց ձեռքերը սիւն են դարձրել, որ չփլուեն տները հայոց: Եւ ինչքան սիրով է լցուած եղել մի իմաստասէրի սիրտը, որ յանդգնել էր ասելու «Աստուած էլ կը գտնես, սակայն, յաւերժութիւն դարձած մօրը՝ երբեք»: Աստուածային բարութեամբ յորդած մայր, որ ըստ մի այլ մտածողի, պատուիրում է, իր մահից յետոյ ձեռքերը կտրել ու նրանով ձեռել փոքրերին,

որ ցաւ հպատճառեն նրանց:

Պետութիւններ այս ամսին են մայրերի փառաբանման տօն հիմնադրել, որ մայրսեան խիղով առկայքն են նրանց սրտերը: Արմէնները իրենց ոստանը քաղաքամայր են կոչել, երկիրն Մայր Հայաստան, լեզուն իրենց մայր լեզու, գետն իրենց Մայր Արաքս, ծառն իրենց՝ «Մայրի»: Երեւի մեր Արմէն նախնիները միայն աստուածացրել էին մայրերի պաշտամունքը, ստեղծելով մայրութեան Անահիտ ոսկեծոյլ դիցուհի-աստուածուհին: Եկեղեցաց գաւառի Երիզա աւանում նրա պատուին հուշակաւոր տաճար էին հիմնել, տաճար էին կառուցել նաեւ աստուածների քաղաքներ՝ Բագարանում, Աշտիշատում՝ Աստղիկի ու Վահագնի Վահէ Վահեան մեհեանների կողքին:

Մայրերի օրուան նուիրումը ամենավաղ տօնակատարութիւնները կատարուել էին հին Յունաստանում, պատուելու համար աստուածների մայր Ռէան: 1600 թուականներին, Անգլիացիք, մեծ պահ չորրորդ Կիրակին տօնախմբել էին մի օր, որը կոչուել էր «Մօր այցելութեան օր»: Քրիստոնէութիւնը, Եւրոպայում տարածուելուց յետոյ, այդ տօնակատարութիւնը վերանունեւել էին «Մայր Եկեղեցի» որ այն, որպէս հոգեղէն ուժ, կեանք շնորհէր ու նրանց պաշտպանէր վտանգներից: Ժամանակի ընթացքում, եկեղեցական այդ տօնը վերափոխել էին, որպէս «Մայրական Կիրակի» տօնակատարութիւնների օր:

Միացեալ Նահանգներում, «Մայրերի օր»ը առաջին անգամ թելադրուել էր կատարելու 1872 թուականին, Ժուլիան Վարտ Հոուզի կողմից, որպէս խաղաղութեանը ձօնուած օր: 1907 թուականին, Ֆիլատելֆիայում, Աննա ձարուիսը սկսել էր մի արշալ՝ հիմնադրելու «Մայրերի Ազգային օր»: Տիկին ձարուիսը համոզել էր քաղաքի եկեղեցուն, մայրերի օրը տօնելու Մայրսի երկրորդ Կիրակին, իր մօրը մահուան երկրորդ տարելիցի օրը: Նա իր համախոհների հետ նամակներ էին յղել նախարարներին, քաղաքական գործիչներին՝ մայրերի օրուայ տօնակատարութեան օր հաստատելու համար: Եւ, 1914 թուականին, ԱՄՆ-ի նախագահ, Մեծ Հայքի վեց Վիլյամսթերում Հայաստանի պետականութիւնը վերականգնելու երաշխակոր, 1920 թուականին Սեւրի դաշնագրով իրեն շնորհուած իրաւարարի իրաւունքով 103,6 հազար քառակուսի քիլոմէթր տարածքով հայոց անկախ պետութեան սահմանների քարտէսը նախագծող, Վուտրօ Ուիլսոնը պաշտօնական յայտարարութեամբ, իւրաքանչիւր տարուայ Մայրսի երկրորդ Կիրակին հուշակել էր որպէս մայրերի օրուայ տօնակատարութեան օր: Այժմ աշխարհի շատ երկրներ ինչպէս Դանիա, Ֆինլանդիա, Իտալիա, Թուրքիա, Պելքիզա, Աւստրալիա «Մայրերի օր»ը նոյնպէս տօնում են նշուած օրը:

Արարտա-Հայասա-Հայաստանի արմէն-հայեր պաշտամունք էին նուիրել «Մայրութեան»ը: Արամազդի դուստր՝ Անահիտն էր եղել մայրութեան, պողաբերութեան, զգաստութեան «Մայր դիցուհին» հայոց: Ապրիլի վեցին, աստուածների քաղաք Բագարանի մեհեանում» Անահիտի պաշտամունքի տօնախմբութեան օրն

էր եղել, հայերն իրենց արքաների հետ փառաբանել էին իրենց երկրին մայրութիւն պարզեւող Մայր Դիցուհուն: Նրա ոսկեծոյլ արձանին իրենց մայրացած արտերի, այգիների բարիքների արգասիքն էին մատուցել: Արիացի Պարթեւները, Հնդկացիները Անահիտին, նրա մայրութեան պաշտամունքը, տարել էին իրենց երկրները: Քրիստոնէայ Պարթեւ Գրիգորը հայոց աշխարհում մարել էր նաեւ Անահիտի պաշտամունքը, եւ Ապրիլի վեցի յաջորդ օրը հաստատել էր իբրեւ Գաբրիէլ հրեշտակապետի «Աւետման օր», մայրութեան նուիրում տօնական օր:

Հայաստան արշաւող Հոռովմէացի Անտոնիոս գորավարը, հայոց աշխարհում այրութեան օրհնութիւնը խորտակելու նպատակով, գերեզմարել էր Անահիտ աստուածուհու ոսկեծոյլ արձանը, այն տարել Կլեոպատրայի երկիր եւ այսպէս առեղծուածով, նրա անագայրին ձեռք կրկնօրինակի գլխամասն է միայն հիմա հանգչում Անգլիական թագաւորական թանգարանում: Հռովմէական Կալիկուլա կայսրը Հռովմում կայսերական ինժոյք էր սարքել, եւ երբ նրան հարցրել էին, թէ այդքան դրամ որտեղից, պատասխանել էր, որ այն կատարել էր Արմէնների Անահիտ աստուածուհու ոտքի միայն մի մատի արժէքով:

Հապա, բեմադրիչ՝ Աշոտ Մալաքեանի «Մայրիկ» շարժապատկերը աշարհի որ բեմադրիչն է իր մայրիկին նման պաշտամունքի արժանացրել եւ տարել նրան աշխարհների բեմերին: Այն հայ ընտանիքի, հայ մայրիկների փառաբանումն է:

Մայրերը, որպէս հրեշտակներ, անքուն գիշերներ՝ իրենց մանչերի օրօրոցների մօտ օրօրներ են ասում, նրանք լսում են այն եւ մայրական հոգու սիրոյ անդորրն իջնելով իրենց սրտիկներին՝ անուշ քուն են լինում: Եւ բանաստեղծներ հայոց երգել են մայրութեան սիրոյ խորհուրդը: Բանաստեղծ Գամառ Քաթիպան երգել էր մայրերի օրօրը.

Քուն եղիր բալաս, աչեդդ խուփարա

ՕՊԱՍԱ ԻՐԱԿՈՒՆՔ ՈՒՆԷՐ

Շարունակուած էջ 13-էն

րաստուէր թրքական դպրոցներուն մէջ կայացնել նկարներու եւ շարադրութեան մրցոյթ մը՝ նուիրուած Կազայի թեմային, ինչպէս նաեւ թուրք աշակերտները մէկ վայրկեան լուրեւանք պէտք էր յարգէին պողեստինցի գոհուած երախներու յիշատակը: Սակայն, Անքարայի մօտ Իսրայէլի դեսպանին թուրքիոյ արտաքին նախարարութեան հետ ունեցած հանդիպումէն յետոյ, մրցոյթի ծրագիրը չեղեալ համարուած է: Ըստ թերթին թուրքիոյ կրթական նախարարութիւնը համաձայնած է չեղեալ նկատել մրցոյթը, երբ Իսրայէլի իշխանութիւնները սպառնացած են Հայոց Ցեղասպանութեան թեման ներառնել Իսրայէլի դպրոցական ծրագիրներուն մէջ:

Նորութիւն չեն ոչ ալ զարմանալի են օտարներու կողմէ եղած նման չարաշահութիւնները: Ողբալիւն, թէեւ ոչ-զարմանալի, Ցեղասպանութեան եւ հայ դատին չարաշահութիւնն է մերը կարծուած ղեկավարութեան կողմէ: Եւ ի՞նչ ընելու համար... Եթէ ոչ մութ

Նախշուն աչերուդ քուն թող գայ վրայ:

Օրօր իմ բալաս, օրօր ու նանի, Իմ անուշիկիս քունը կը տանի: Դուն ալ քուն եղիր, ինձի ալ քուն տուր,

Սուրբ Աստուածամայր, անուշիս քուն տուր:

Օրօր իմ բալաս, օրօր ու նանի, Իմ անուշիկիս քունը կը տանի:

Եւ ուրիշ մի հանճարեղ հայ՝ երգահան Բարսեղ Կանաչեան, Քաթիպայի երգին հնչիւններ հիւսեց, եւ ինչքան անուշ է այն, կարծես երկնից է քաղել այն: Սակայն մայրեր իրենց մանչերի սրտերին ռազմի երգեր են նաեւ յորդել՝

Ձարթիր որդեակ վեր կաց, Պատերազմի փող հնչեց, Ձարթիր գոչեց ձայնն հայրենաց,

Կենաց մահու ժամն հնչեց:

Եւ ուրիշ մի բանաստեղծ Շիրազ հայոց, Շիրազի վարդերի բոցերով, իր հետ տիեզերքից բերած սիրոյ զօրանջներով երգեց մայրերի խորհուրդը՝

Յագար ու մի սիրտ բացեցի,

Ոչ մի անմեռ սէր չգտայ,

Ծովից խորունկ սէր գգացի,

Երբ մայրիկիս սիրտը մտայ:

Մօր սրտում է Աստուած քնած՝

Լոկ մօր սրտի մէջ է զարթնում,

Աւաղ, առանց Աստուծոյ մնաց

Իմ որբ կեանքը՝ անյոյս մթնում:

Շիրազ, Արարատի ձիւնա-

շաղ ծաղիկների, նրա ձիւնոտ

թաղի, նրա քարեղէն սրտի, նրա

ոգեղէն խորհուրդի մեհեանի

քրմացած բանաստեղծը ինչքան

սիրով ու խանդաղատանքով է

երգել մօր սիրտը, նրա արմենա-

կան հոգուց ժայթքած մայրական

տիեզերական սիրոյ խորհուրդի

ինչքան բանաստեղծութիւններ է

երկնել եւ այն Մեսրոպի լուսեղէն

գրերով քնարակել որպէս «Յու-

շարճան» մայրերին:

Եւ այսօր, մայրերը ծաղիկ-

ների նման լոյս ժպիտներով թող

յորդեն, արեւներ նրանց, արեւի

նման յաւերժութիւն նրանց եւ

եթէ կարողանալիք կարդալ սրտ-

րը նրանց... օհ, մայրական սիրոյ

ինչքան խարոյկներ են վառուած

այնտեղ:

աղբիւրներէ խոստացուած նիւթական ու բարոյական վարձատրութիւններ ստանալու եւ իրենց իշխանական աթոռները աւելի ապահով պահելու համար: Բարեացական մարդիկ կ'ըսեն, թէ իրենց կամքովը չէ, այլ պարտադրուած են տեղի տալ «դուրսէն եկած գորաւոր ճնշումներու» եթէ իրաւ է այս ենթադրութիւնը, իրենց ուժերէն վեր է այդ ճնշումներուն դէմ կենալը, ենթարկուելէն աւելի պատուաւոր ձեւը, ուրեմն, հրաժարիւն էր իրենց պաշտօններէն: Կրակորական այսպիսի ընդդիմութիւն մը բարոյական մեծ վարկանիշ մը պիտի ըլլար իրենց ղեկավարներ նկատուելու համար:

Բայց այս ղեկավարութեան պարագլուխը ան չէ՞ որ Հայոց խորհրդարանի սպանդին ժամանակներ քիչ գործոց եւ ապահովութեան նախարարն էր, հետեւաբար, իր ստորադասներն էին խորհրդարանի ապահովութեան հսկողները... որոնք թոյլատրեցին զինեալ ոճրագործներու վոհմակին մուտքը խորհրդարան եւ ոճրային առաքելութեան գործադրութիւնը...:

Կարծեմ պէտք չմնաց շարունակելու:



# ՊԵՐՈՒ ԹԵՐՁԵԱՆԻ «ԵԳԻՊՏԱՅԱՅ ԶԱՅԵԱՑՔՆԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ԳԻՐՔԸ

2008 թվականին, Եգիպտոսի մայրաքաղաք Գահիբի մէջ լոյս տեսած է Պերձ Թերզեանի «Եգիպտոսահայ Հայեացքներ Պատմութեան Քաղաքականութեան Եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» խորագրեալ գիրքը, որ գրուած է արաբերէն լեզուով եւ կը բաղկանայ 308 էջերէ:

Գիրքին հեղինակը Եգիպտոսի հայ գաղութի նահապետներէն մէկն է: Ան կարեւոր պաշտօններ վարած է հայ ազգային մարմիններու՝ թեմական խորհուրդ, Հ.Բ.Ը.Մ.-ի մարմիններ, Հայ ազգային հիմնադրամի մէջ, եւ այլն: Ներկայիս ան խորհրդատուն է «Արեւ» օրաթերթի արաբերէնով լոյս տեսնող համանուն լաւելուածին, որուն հիմնադրման գլխաւոր մղիչ ուժն էր: 1998-ի Յունուարէն ի վեր հրատարակուող այդ լաւելուածին մէջ ան ստորագրած է 40 յօդուածներ, որոնք ընդգրկուած են այս նոր գիրքին մէջ: Նախապէս, 1970-ականներու վերջերէն սկսեալ, ան ազգային թէ՛ այլ նիւթերով յօդուածներ գրած է «Արեւ» օրաթերթին մէջ:

Հատորին «մուտք»-ի խօսքը կը պատկանի արաբերէն լաւելուածի իմբազիր Մուհամմատ Ռիֆա-աթ Իմամին, որ նշած է, թէ «այս ծաղկեպոստը կ'արտացոլայնէ գրողին կեանքն ու գործունէութիւնը, անոր ինքնութիւնն ու նախասիրութիւնները»:

Գիրքին մէջ վերահրատարակուած են Պ. Թերզեանի հրատարակումները, լոյս տեսած «Արեւ»-ի արաբերէն լաւելուածներուն մէջ, փետրուար 1998-Հոկտեմբեր 2002-ի եւ Մայիս 2007-Փետրուար 2008 ժամանակահատուածներուն, որոնց գլխաւոր նիւթերը եղած են հայկական կեանքն ու միջազգային կեանքը: Երկրորդի պարագային, ան յատուկ ուշադրութիւն յատկացուցած է պաղեստինցի արաբ ժողովուրդի ազատագրական պայքարին: Այս ծիրէն ներս, հեղինակը ներկայացուցած է Պաղեստինի, յատկապէս Երուսաղէմի եւ Բեթղէհէմի մէջ հայտնի քաղաքները, դատապարտելով հայերուն պատկանող կալուածները իւրացնելու իսրայէլեան լկտի փորձերը, որոնք «միջազգային իրաւունքի կոպտ խախտումներ են»:

Տարբեր էջերու մէջ «Եգիպտոսահայ հայեացքներ...»-ու հեղինակը կ'անդրադառնայ հայ եւ քիւրտ ժողովուրդներուն նկատմամբ Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութեան: ՔԱԿ-ի ղեկավար Ապտուլ լա Օճալանի Թուրքիոյ կողմէ առեւանգման առիթով գրուած յօդուածով մը ան դիտել կու տայ, որ անոր ձերբակալումը, դատավարութիւնը եւ մահապատիժը «պիտի չկարենան մարել քրտական ապստամբութիւնը Թուրքիոյ մէջ»: Անդրադառնալով համաթրքական ծրագիրներուն, ան կ'ընդգծէ «Թուրքականութեան մեծ վտանգը ոչ միայն Ռուսիոյ, Հայաստանի, Իրանի եւ շրջանային ուրիշ երկրներու, այլեւ արաբական երկրներուն համար»:

Շուրջ տասնեակ մը յօդուածներ, լրիւ կամ մասամբ, կը ծանրանան Հայոց Յեղասպանութեան միջազգային ներառեալ Թուրքիոյ կողմէ ճանաչման գործընթացին վրայ, հիմնաւորուած փաստերով ու փաստաթուղթերով մերկացնելով թրքա-

կան խեղաթիւրումները:

2000 թվականին, այցելելէ ետք հայերու համար յատուկ իմաստ ու երկիւղածութեան մօտեցում ունեցող Տէր Զօր եւ Մարկատէ, Պերձ Թերզեան թերահաւատներուն եւ կեղծարարներուն կոչ կ'ուղղէ այցելել սուրիական անապատ եւ տեղւոյն վրայ տեսնել թրքական բարբարոսութիւններուն մինչեւ օրս հողի երես դուրս եկող անթիւ ու անհամար ապացոյցները՝ հայ նահատակներուն ոսկորները:

Հեղինակը իր ուշադրութենէն դուրս չէ ձգած մշակոյթի եւ արուեստի գործիչներն ու խնդիրները: Ան յօդուած մը ունի անուանի երգիծանկարիչ ու երգիծաբան Ալեքսանտր Սարուխանի հայկական ու եգիպտական ներդրումներուն նուիրուած: Տարբեր էջերու մէջ անդրադարձած է Սերօ Խանգաղեանի եւ արաբ արձակագիրներին Նեթիպ Մահմուդի ու Թաուֆիք Հաքիմի հանդիպումին, Վեմադրիչ Ատոմ էկոյեանի ու անոր «Արարատ» ֆիլմին: Պոլսահայ «Ակօս» շաբաթաթերթի իմբազրապետ Հրանդ Տինքի ահաբեկումէն անմիջապէս ետք անոր հրատարակած յօդուածը կը կրէ «Հայ ազգային նահատակ, թէ՛ թուրք ազգային հերոս» հարցական խորագիրը:

Պ. Թերզեան կը յայտնէ կարեւոր տեղեւորութիւններ եւ հետաքրքրական դիտարկումներ, որոնք մինչ այդ կա'մ մնացած են անյայտ եւ կամ չեն արժանացած ուշադրութեան: Անդրադառնալով 1977-ին Պեռնի (Չուիցերիա) մէջ Թուրքիոյ օրւան արտաքին գործոց նախարար Իհսան Սապրի Չաղլայանի լինելու հայ աւանդական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներուն միջեւ գաղտնի հանդիպումին ան կը տեղեկացնէ, որ Թուրքիա տրամադրութիւն յայտնած է ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը իբրեւ «պատմական իրողութիւն, պայմանաւ որ հայերը, փոխարէնը, հրաժարին իրենցմէ բռնագրաւուած եւ Թուրքիոյ կցուած հայկական պատմական հողերու նկատմամբ որեւէ պահանջ»:

Գրախօսութեան նիւթ դարձող այս ժողովածուին մէջ տեղ գտած յօդուածները կ'ապացուցեն, որ անոնց հեղինակը ոչ միայն արաբերէն լեզուի, այլեւ մահմետական արաբ քաղաքացիի հոգեբանական նրբութիւններուն յստակ իմացութիւն ունի: Այս արժանիքներուն շնորհիւ, արաբ անհատը դիւրութեամբ կրնայ ընկալել «Արեւ»-ի մէջ անոր առաջնորդող յօդուածները: «Արեւ»-ի արաբերէն լաւելուածի իմբազիր Մուհամմատ Ռիֆաաթ Իմամ արդարացիօրէն կը յայտնէ այն կարծիքը, որ հրատարակելու ժամ գիրքը «կարեւոր լաւելուած մըն է արաբական գրադարանին մէջ, ինչպէս նաեւ անշրջանցելի աղբիւր մը հայկական նիւթով գրադուողներու եւ ուսումնասիրողներու համար»:

«Եգիպտոսահայ հայեացքներ պատմութեան, քաղաքականութեան եւ մշակութային ժառանգութեան վրայ» հատորը իսկապէս գնահատելի աշխատանք մըն է, որ օգտաշատ աշխատութիւն մը ըլլալով, պատիւ կը բերէ թէ՛ գիրքին եւ թէ՛ անոր հեղինակին:

«Ա.»

# ՔԱՆԻ ԴԵՌ ԿԱՅ ԿԵՂԾԵԼՈՒ ԶՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ, ՑԱՆԿԱՑԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵՂԾՈՒԵԼՈՒ Է

Մարումակուած էջ 2-էն

սում է ստեղծուած անընդունելի իրավիճակը յաղթահարելու ունակութիւն: Այսինքն, քաղաքացիների աչքին քաղաքական գործիչ է համարուած նա, ով ընդունակ է փոխել պահի իրավիճակը: Բողոքական հասարակութիւնն ընդդիմութեան մէջ որեւէ այլ արժէք չի տեսնում: Յաճախակի, շատ բարդ պայմաններում, հասարակութիւնը նոյնիսկ պատրաստ է աչք փակել ընդդիմադիր ուժի մնացած այլ յատկութիւնների վրայ, եթէ այդ ուժի մէջ տեսնուած է հասարակութեան առջեւ ծառայած գլխաւոր խնդիրը լուծելու ընդունակութիւն:

Թուով էր, բոլոր նախադրեալները կան, որպէսզի ստեղծուած իրավիճակը լուրջ քննարկման առարկայ դառնայ: Առաւել եւս, որ ժամանակը չի սպասում՝ երկրում բռնութիւններն աւելանում են օրէցօր: Սակայն, ինչ ունենք իրականութեան մէջ: Հասարակութիւնը սպասում է քաղաքական ուժի, որը վերջապէս ի վիճակի կը լինի գտնել կեղծիքի մեքենան ջարդելու իրական մեխանիզմ, իսկ իրենց ընդդիմութիւն համարող գործիչները ինդուլգենցիա են փնտռում այն փաստում, որ ընտրութիւնը կեղծում է իշխանութիւնը: Դա բաւարար է համարում քաղաքական ուժերի ու հասարակութեան երկխօսութեան մէջ: Մնում է միայն ասել՝ "մենք անգոր ենք կեղծիքի դէմ, գտնէք մեթոդներ մեզ իշխանութեան բերելու, իսկ մնացածը մենք կ'ապահովենք": Ընդ որում, ոչ ոք, իհարկէ, չի սովորեցնում քաղաքացիներին, թէ ինչպէս դա անեն: Արդիւնքում քաղաքացիները դատարկաձեռն տուն են գնում: Չէ որ գլխաւորը, որ նրանք սպասում են գործող իշխանութեան հակառակորդներից, դա նրանց հեռացնելու մտադրութիւններն ու ընդունակութիւնն է: Եթէ նման ընդունակութիւն չկայ, մնացեալը ոչ մեկին չի հետաքրքրում:

Ճշմարտութիւնն այն է, որ նախքան քաղաքացիներին դիմելը քաղաքական գործիչները պէտք է կեղծիքի մեքենան խափանելու հմտութիւն ձեռք բերեն: Արդէն նման ըմբռնման յայտնուելը քա-

ղաքական կեանքում կը նշանակորի առաջընթաց: Այս հարցին պատասխան չունեցող գործիչները պարզապէս դուրս կը մնան հասարակութեան ուշադրութիւնից եւ այլեւս չեն ապակողմնորոշի նրան: Կը մնան այն ուժերը, որոնք կը հասկանան այն հանգամանքը, որ ոչ ոք չի կեղծի ընտրութիւնները, եթէ վստահ չլինի սեփական անպատեղիութեան մէջ: Նշանակում է, նման վստահութիւնից պէտք է գրկել բոլորին: Ահա եւ քաղաքական հայեցակարգի բանաձեւը:

Ում պարզ է, որ կեղծարարների անպատեղիութեան ռեսուրսը այդ կեղծիքը պատուիրող իշխանութեան մէջ է: Համապատասխանաբար, խնդիրն այն է, որ այդ ռեսուրսը չբաւականացնի, որպէսզի կեղծարարը վստահ կատարի իր առաքելութիւնը: Այս խնդիրը կարող է լուծուել միայն այն ժամանակ, երբ այս կամ այն քաղաքական ուժը, մի կողմից, իշխանութեան ռեսուրսը մասնատելու տեխնոլոգիա գտնի, միւս կողմից տեխնոլոգիա՝ հակազդեցութեան գործոնի ուժով այդ ռեսուրսը հաւասարակշռելու: Կեղծարարը պէտք է ընտրութեան առջեւ դրուի՝ սեփական պաշտպանութեան աստիճանի գնահատման գործում: Եթէ նա վախենում է հասարակութեան պատժից ու չի հաւատում իշխանութեան երաշխիքներին, ապա նրա գործունէութիւնը կը խափանուի: Միայն այդպիսի խափանումը բաւարար է, որ ամէն մի իշխանութիւն հրաժարուի կեղծարարութեանն ապահովելուց: Ինքն իշխանութիւնը նոյնպէս կուրօրէն հաւատում է կեղծարարութեան ամենագորութեանը: Անհրաժեշտ է նրան իր մոլորութեան ակնառու օրինակ ցոյց տալ: Դրանում է ցանկացած ընդդիմութեան առաջին քաղաքական առաքելութիւնը:

Հեշտ է արդեօք քաղաքական ուժի համար հասնել նման գործունակութեան: Երեւի հեշտ է: Սակայն դա արդէն հասարակութեան խնդիր է: Ինչպէս ասում են՝ քեզ սուզակ ես կոչել, ուրեմն սուզուիր: Եթէ ոչ, մնում է միայն գանգատուել կեանքից:

ՄԱՆՈՒՅԼ ՍԱՐԳՍԵԱՆ  
ՌԱՀՂԿ փորձագէտ  
«ԼՐԱԳԻՐ»

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՆԵ

Ընկ. Տօքթ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԲԵԱՆԻ հիւանդութեան առիթով՝ Ս.Դ.Հ.Կ. «Արախն Կիտուր» մասնաձեւի վարչութիւնն ու անդամները շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք յարգելի ընկերոջ:

\*\*\*  
Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու «Նոր Սերունդ Հեռուստաժամ»-ը կատարեալ ապաքինում կը մաղթեն անուանի մտաւորական եւ հասարակական գործիչ Տօքթ. Յարութիւն Սաղբեանին:

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ ԵԱՂՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ ննջեցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, ի մասնաւորի Տօքթ. Արա Եաղճեանին:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐԺ. ՏԵՐ ՎԱՐԴԱՆ ԱԻ. ՔՀՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ մեր յարգելի աշխատակիցի ընտանեկան բոլոր պարագաներուն, ինչպէս նաեւ թեմիս Բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրաչեանին:

# ՃԱՆԱԴԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆ ՄՈՒԹԻՆ ՄԵՋ

## Շարունակում էք 5-էն

զէ հայ ժողովուրդը՝ հայրենի, ար-  
ցախեան եւ սփիւռքի հատուածներ-  
ում:

«Առանց պայմանի» այս ան-  
փառունակ, անհեռանկար ուղեցոյ-  
ցի մէջ զաղտագողի սպրդեցուած  
դրոյթներն ու անուղղակի երան-  
գաւորումները թրքական վար-  
պետորդի դիւանագիտութեան  
լուրերէն բաց իրական նախա-  
պայմաններու համագարկերն են՝  
մեր ամենակարող իշխանապե-  
տին միջնորդութեամբ հայ ժողո-  
վուրդի կենսական շահերուն դէմ  
արձակուած: Բացառաբար ըս-  
ուած նախապայմաններ են գլխա-  
ւոր երկու դրոյթները: Առաջինը՝  
Հայաստանի հանրապետութեան  
կողմէ Կարսի պայմանագրի վա-  
ւերացումը, միանգամընդմիշտ կը  
նուիրագործէ Սովետական իշխա-  
նութիւններու կողմէ թուրքիոյ  
չնորհուած հայապատկան հողե-  
րու վերջին պարզելը: Երկրոր-  
դը՝ հայոց ցեղասպանութեան  
փաստն ուսումնասիրելու նպա-  
տակով պատմաբաններու ջան-  
նաժողովի ստեղծման նախապայ-  
մանի հաւանութիւնը իր անսը-  
տութեամբ, ձախակերութեամբ եւ  
սինիզմով վրդովեցուց ամբողջ  
աշխարհի համայն հայութիւնը՝  
ինչ դաւանանքի եւ քաղաքական  
ուղղութեան ալ պատկանին անոնք:  
«Քարտէսին» մէջ բացայայտօրէն  
չնշուած դրոյթն է դարաբաղեան  
հարցի կարգաւորումը յօգուտ  
Ատրպէյճանի – դարձեալ պարա-  
զայական քմայածին պարզել մը՝  
Սովետական իշխանութեան օրե-  
րէն, որուն ձեւական պատրուակ-  
ներէն մէկը եղաւ այդ օրերուն  
հակապոլիտիկեան զինեալ հայ-  
կական ուժերու ներկայութիւնը  
հարեւան Զանգեզուրի մէջ: Իր  
բացակայութեամբ հանդերձ, Ղա-  
րաբաղը ինքնին հասկնալի նկատ-  
ուած է որպէս «ճանապարհի»  
հանգուցային կարեւորագոյն օղա-  
կը: Թուրք ղեկավարները միշտ  
պնդած են ատիկա՝ որպէս նախա-  
պայման հայ-թրքական յարաբե-  
րութիւններու բնականոնացման:  
Յօժարեցան այստեղ լուրերէն պա-  
սել՝ նախագահ Օպամայի իրենց  
բարի կամեցողութիւնը ցուցադ-  
րելու – եւ նոյն ատեն թափանցիկ  
կերպով թաքցուած միւս պայ-  
մանները աւելի հեզասահօրէն  
կլլեցնելու համար մեր մենատէ-  
րին եւ, իր միջոցով, հայ խաբ-  
ուած ժողովուրդին:

Այս ամէնը առաջին հանգը-  
րուան էր թրքական ճարպիկ ու  
համակարգուած երկարաշունչ  
դիւնագիտութեան՝ ձախողեցնե-  
լու համար արագօրէն աւելի ու  
աւելի կողմնակիցներ շահող հա-  
յոց ցեղասպանութեան միջազգա-  
յին ճանաչումը: Հայաստանի իշ-  
խանութիւններն ու համայն հա-  
յութիւնը 2009 Ապրիլին խոշոր  
կորուստ մը արձանագրեցին  
դիւանագիտական-քաղաքական  
պայքարին մէջ – անասման կո-  
րուստ՝ քանի մը հայանուն ան-  
պատասխանատուներու անփու-  
թութեան ու մեծամտութեան  
պատճառաւ: Շարունակելով իրենց  
յաղթական գրոհը առանց դիմա-  
դարձութեան, թուրք քաղաքա-  
գէտները այնքան վստահ էին մեր  
իշխանութիւններու ապիկարու-  
թեան ու միամտութեան որ, մեր  
սուզին յաջորդող օրն իսկ, Շա-  
բաթ 25 Ապրիլին անցան քաղա-  
քական անողք յարձակողականի՝

առանց քանի մը օր սպասելու  
փրոթոքոյալին փափկանկատու-  
թեան: Նախագահ Օպամայի առ-  
ջեւ իրենց կուսական պարը աւար-  
տած էր, ցեղասպանութիւն բառը  
չէր արտասանուած, ուրեմն իրենք  
կրնային ազատօրէն վերադառնալ  
իրենց սովորական զբաղմունքին:  
Թուրքիոյ նախագահը, վարչա-  
պետը եւ արտգործնախարարը հա-  
մակարգուած խմբերով սկսան  
զեղզեղել եւ «դժգոհութիւն»  
յայտնել թէ՛ նախագահ Օպամա,  
հայոց արհաւիրքներուն ակնար-  
կելէ եւ «մեծ եղեռն» ոգեկոչելէ  
ետք, պէտք էր նաեւ ցաւակցու-  
թիւն յայտնած ըլլար բազմահա-  
րիւր հազարաւոր թուրքերու եւ  
իսլամներու համար որոնք իբր  
թէ հայերու ձեռքով կոտորուե-  
ցան նոյն ժամանակ, թէ՛ քաղա-  
քագէտներ ու պետական մարդիկ  
չեն կրնար հաստատումներ ընել  
պատմական եղելութիւններու մա-  
սին, եւ թէ՛ ցեղասպանութիւն  
բառի գործածութիւնը կրնայ գայ-  
րացնել ԱՄՆ-ի դաշնակից Թուրք-  
իան ու խանգարել հաշտութեան  
բանակցութիւնները Թուրքիոյ եւ  
Հայաստանի միջեւ:

Կարճ՝ Ապրիլ 24-էն անմի-  
ջապէս ետք Թուրքիոյ ղեկավար-  
ները անյապաղ սկսած են նոր  
արշաւանքի մը՝ խճճելու եւ ան-  
ճանաչելիօրէն չարափոխելու հա-  
մար արդէն իսկ իրենց պարտադ-  
րած «ճանապարհային քարտէ-  
սը»: Անոնք հոն կ'աւելցնեն ճա-  
նապարհի նորանոր անհասկնալի  
նշաններ՝ շփոթեցնելու եւ ծուղա-  
կը ձգելու համար «պատմաբան-  
ները»: Մեզի արդէն պերճախօս  
առիթը կ'ընծայուի ուսանելիօ-  
րէն նախաճաշակելու եւ համոզ-  
ուելու թէ ինչպիսի լաբելիրինթո-  
սային ուղեւորութիւն մը կը պատ-  
րաստուի Թուրքիոյ խորամանկ  
դիւանագէտներուն ու պատմա-  
բանի պատմուճան հագած աղ-  
ուէններուն կողմէ՝ «առանց պայ-  
մանի» այսպիսի ցնորական ճա-  
նապարհորդութեամբ:

Պատմաբաններու մասին շա-  
ղակրատող թուրք եւ հայ երազա-  
տեսները արդեօք պահ մը կ'արթն-  
նա՞ն՝ անդրադառնալու համար  
թէ իրենց քննարկելիք ցեղասպա-  
նութեան փաստաթուղթերը չեն  
գտնուիր Թուրքիոյ արխիւնե-  
րուն մէջ: Նուազագոյն տարակոյ-  
սը մի ունենաք թէ այսքան սիս-  
տեմաթիկ ու ժրջան թրքական  
կառավարութիւնը պարտն ու  
պատշաճը տնօրինած է արդէն:  
Կէօպէլեան մեծ սուտի տիրահո-  
չակ վարդապետութեամբ  
թրծուած պատմաստեղծ թուրք  
«պատմաբան» դոկտոր-փրոֆե-  
սորները Թուրքիոյ բոլոր ճշմա-  
րիտ վաւերաթուղթերը տամնամ-  
եակներու ընթացքին արդէն են-  
թարկած են նպատակայարմար  
«վնասագերծման» ու թրքավա-  
յել «մաքրագործումի» (ethnic  
cleansing, ինչպէս սովոր են բարձ-  
րադարակ աղմկել ամէն անգամ որ  
թուրք մը վնասուի՝ դարբերով  
օսմանեան բռնութեան լուծը ճա-  
շակած ազգերու կողմէ):

Յեղասպանութեան իսկական,  
հարազատ վկայութիւնները դուք  
պիտի գտնէք ամբողջ աշխարհի  
տարածքին: Շօշափելի, անհերքելի  
ապացոյցներն ենք հայոց ցեղաս-  
պանութեան մաքրագործ ազատ-  
ուածներու նախորդ ու ժամանա-  
կակից սերունդները, աշխարհաս-  
փիւռ համայն հայութիւնը, նե-  
րաւեալ պատմական Հայաստանի

հողատարածութեան տասը տոկոս-  
սին եւ արցախեան լեռնալանջե-  
րուն վրայ ամփոփուած հայրենի  
մաքառող ժողովուրդը: Ապացոյցը  
մենք ենք՝ օսմանեան թուրքիոյ եւ  
իր լծակից մոլեռանդ հրէշներու  
յղացած, ծրագրած, կազմակերպած  
ու գործադրած ցեղասպանութեան  
վերապրողները, ժառանգորդները,  
անլուրի պահանջատէրերը: Էրտո-  
ղանի եւ Սերժ Սարգսեանի հովա-  
նաւորած ո՞ր մէկ հանճարեղ պատ-  
մաբանը պիտի կարենայ պատրաս-  
տել արիւնոտ թղթածրարները այս  
ողբերգութիւններուն ու մարդկու-  
թեան դէմ գործուած ոճիրներուն:

Ճանապարհային խառնափն-  
թոր քարտէսի մը արիւնալի նշան-  
ները վերծանելու կոչուած պարո-  
նայք պատմաբաններ, որպէս ձեր  
հանճարի սկզբնափորձ՝ այսու ձեր  
քննարկման կը յանձնեմ չնչին,  
շատ վտիտ թղթածրար մը: Պարզ  
ու տարրական այս պարագայն  
ուղղակիօրէն առնչուած է՝ սփիւռ-  
քի մէկ անկիւնը այս սողերը  
առանց արցունքի, նուազագոյն գայ-  
րոյթով ու կարելի ամենագուսպ  
դառնութեամբ թուղթին յանձնել  
փորձող այս յօդուածագիրին հետ,  
իմ անձիս հետ: Ես՝ այս գրութեան  
հեղինակը, ամենակրտսերն ու վեր-  
ջինն եմ վեց եղբայրներու եւ երեք  
քոյրերու: Երկրորդ աշխարհամար-  
տէն ալ առաջ սկսած՝ Պէյրութի  
խեղճուկ հիւղաւանի մը փայտաշէն  
ու թիթեղածածկ մեր տնակին մէջ,  
ձմեռնային ցուրտ ու երկար դի-  
շերները ծնողքս հեքիաթի փոխա-  
րէն ալ առաջ սկսած՝ Պէյրութի  
խեղճուկ հիւղաւանի մը փայտաշէն  
ու թիթեղածածկ մեր տնակին մէջ,  
ձմեռնային ցուրտ ու երկար դի-  
շերները ծնողքս հեքիաթի փոխա-  
րէն ալ առաջ սկսած՝ Պէյրութի  
խեղճուկ հիւղաւանի մը փայտաշէն  
ու թիթեղածածկ մեր տնակին մէջ,  
ձմեռնային ցուրտ ու երկար դի-  
շերները ծնողքս հեքիաթի փոխա-  
րէն ալ առաջ սկսած՝ Պէյրութի  
խեղճուկ հիւղաւանի մը փայտաշէն  
ու թիթեղածածկ մեր տնակին մէջ,

րուն յանձնելու այն որոշումը թէ  
իմ երկու անմեղ եղբայրներուս  
մահը – եւ մէկուկէս միլիոն անմեղ  
քոյրերուս ու եղբայրներուս եղե-  
ռական սպանողը – ցեղասպանու-  
թիւն էր թէ՞ ցաւալի արկած՝  
սուրիական անապատին մէջ:

Կը ներէք որ ձեր սուղ ժամա-  
նակը կը խլեմ, պարոնայք քաղա-  
քագէտներ, դիւանագէտներ, պատ-  
մաբաններ, եւ այլն: Խնդրեմ, քչիկ  
մըն ալ համբերութիւն: Հակառակ  
կապարեայ, անտանելի յուշերուն,  
հայրս իր տառապակոծ հոգին աւան-  
դեց 106 տարեկանին, մայրս՝ 97  
տարեկանին, հօրս մահէն երկու  
ամիս ետք, իր քունին մէջ: Իրենց  
երկար կեանքի ընթացքին, սա-  
կայն, չեմ չիշեր որեւէ ատեն որ  
անոնք գէթ մէկ անգամ կուշտու-  
կուռ կամ առնուազն ցած ձայնով  
խնդացած ըլլան: Այո, կ'ուրախա-  
նային իրենց զաւակներուն ու թոռ-  
ներուն յաջողութիւններով, անոնց  
երջանակութեամբ: Բայց իրենց  
խնդուքը, ափսոս, չեմ չիշեր եր-  
բէք: Եւ որպէս իրենց հոգեբարոյա-  
կան ժառանգորդը, ամէն անգամ  
որ գործով եւ ընկերային ուրախ  
առիթներով պաշտօնակիցներու կամ  
ընկերներու հետ կ'ըլլայի տարբեր  
երկիրներու լուսայորդ քաղաքնե-  
րուն մէջ, որոշ մտերիմ խօսակցու-  
թեան ներածականէն ետք գրեթէ  
միշտ նոյն հարցումը կ'ուղղուէր  
ինծի. «Ինչո՞ւ է տեսակ մը այն  
խոր տխրութիւնը որ կայ մէջը ու  
չի հեռանար չաքերէդ, նոյնիսկ այն  
պահերուն երբ կը ծիծաղիս»: Եր-  
բեմն փորձած եմ բացատրել պատ-  
ճառը, բայց աւելի յաճախ ստիպ-  
ուած եղած կամ աւելի յարմար  
նկատած եմ կիսատ-պոստ չպա-  
տասխանել:

Ես չեմ ուզեր որ տխրութեան  
այս կապարեայ ծանրութիւնը շա-  
րունակէ ընկճել մեր գալիք սե-  
րունդներու մարդկային սլացքը,  
մտային խոյանքը, հոգեկան ճախ-  
րանքը: Ես կ'ուզեմ որ իմ զաւակ-  
ներս, թոռներս ու ծոռներս ազատ  
թուիչքով դիմաւորեն եկող տաս-  
նամեակներն ու դարերը: Բայց  
ճանապարհային քարտէս որակ-  
ուած անձնատուութեան խայտառակ  
հռչակագիրը չէ որ կը նշէ ատոր  
առաջնորդող ուղին:  
Ընդհակառակը, ճամբայ ելլելէ  
առաջ անհրաժեշտ է, նախ, ուղիղ  
կանգնել մեր ոտքերուն վրայ, բայց  
ճակատով դառնալ մեր հարեւան  
երկիրներուն եւ ինքնավստահ սեղ-  
մել մեզի երկարած ձեռքերը: Առանց  
նախապայմանի եւ փոխադարձ  
ճշմարիտ յարգանքով:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ  
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ  
ՄԷՋ  
(200 ՀՈԳԻԻ  
ՀԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ  
ԱՌԻԹՆԵՐՈՒ  
ՀԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE.  
PASADENA  
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ  
(626) 797-7680**

INVITATION FOR BIDS  
(IFB) NO. 1668  
THE REHABILITATION OF AN  
EXISTING 28-UNIT APARTMENT  
BUILDING  
  
The Housing Authority of the  
City of Los Angeles (HACLA) invites  
vendors to submit bids for the Reha-  
bilitation of A Vacant Two-Story Court-  
yard Apartment Building (of 13,045  
sq. ft.) located at: 461 W. 87<sup>th</sup> Street,  
Los Angeles, CA 90003. Copies of the  
IFB may be downloaded from the  
internet at www.HACLA.org/constgs.  
Copies may also be obtained, at no  
charge, at the Authority's General  
Services Department, 2600 Wilshire  
Boulevard, Suite 3100, Los Angeles,  
CA 90057. Bids will be accepted at the  
same location until 2:00 p.m. (local  
time), June 5, 2009.  
5/14, 5/21/09  
CNS-1582564#  
MASSIS WEEKLY

### ՅՈՒՇԱՅԱՆԴԷՍ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 94-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Շարունակում է 8-էն

Հոգեհանգստի արարողութիւնը առաջնորդեցին Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, Տէր Մանուկ Աւագ քահանայ. Մարգարեանը:

Հոգեհանգստեան արարողութեան երգերն ու աղօթքները կատարեցին վարժարանի աշակերտները խմբավար ընթացիկ Պրն. Կոմիտաս Քէչիշէանի:

Արշակ Տիգրանեան դպրոցի Աշակերտական կորսուողի նախագահ Անի Տաղլեանը հրաւիրեց Արեւիկ Ալեքսանեանին ներկայացնելու Արշակ Տիգրանեանի կենսագրութիւնը, իսկ Անի Դարակչեանը խօսեց մեծ բարերարի գործունէութեան մասին:

Անի Քրիսեանը անգլերէնով ներկայացրեց Ապրիլի խորհուրդը, իսկ Նինա Լուսինեանը ասաց աշակերտութեան խօսքը Ապրիլի 24-ի աոիթով:

Աշակերտները ազնիւ հպարտութեամբ յայտարարեցին, -Թող հանգիստ հանգչեն մեր անմեղ նահատակների ոսկորները, մենք տիգրանեանցիներս պիտի շարունակենք պայքարը, աշխարհը պիտի ճանաչի հայոց ցեղասպանութիւնը, արդարութիւնը պիտի յաղթի:

Մբանչելի ամուսնով հանդէս եկան Քրիսթինէ Գրիշիկեանը, Ժանէթ Սարգիսեանը, Լուսինէ Ջէյթթունցեանը:

10-րդ դասարանի աշակերտները ձայնային հրաշալի համարումով կատարեցին Պարոյր Սեւակի «Ղօղանջ Եղեռնականից» հատուած:

Տաներորդցիների կատարմանը էլ աւելի յուզական երանգ հաղորդեց «Դլէ Եաման» երգի կատարումը:

Յիշատակի հանդիսութեանը շատ զեղեցիկ կատարումով մասնակցեցին վարժարանի երգչախմբի անդամները երաժշտութեան ուսուցիչ Պրն. Կոմիտաս Քէչիշէանի խմբավարութեամբ: Երգերը աշակերտների շուրթերից հնչում էին անասելի մեղմութեամբ, եկե-

ղեցիի պատերի մէջ ծաւալուած էին գուլալ մաքրութեամբ, իրար ազդեցելով հեռուոր դարերը, հայ ժողովրդի անխախտ հաւատքի խոնարհ ու վեհ իմաստութիւնը, Եղեռնի զոհերի թախծաշունչ հառաչանքը, «Տէր Ողորմեայ»ի մորմոքը:

Իր տպաւորիչ եւ պատգամներով հարուստ խօսքի մէջ Սրբազանը ասաց, որ մեր նահատակների յիշատակները մեր արեան մէջ են, նրանք ընկան, բայց վերածնունդին Արշակ Տիգրանեաններու նման մեծանուն հայերի կերպարանքով, վերածնունդին, որպէսզի ապացուցեն, որ չես կարող սպանել մի ժողովուրդ, որ չի ցանկանում մեռնել: Պատգամեց աշակերտներին լաւ սովորել, տէր եւ պահպան լինել հայ ազգին, մշակոյթին, հոգեւոր գանձերին անցնելի հանրայայտ մարդկանց կեանքի տպաւորիչ օրինակներով խրախուսեց աշակերտներին:

Այնուհետեւ ցուցադրուեց աշակերտների կողմից պատրաստուած շատ արտայայտիչ մի տեսահոլովակ: Տեսահոլովակը սկսուեց տեղահանուած հայերի բնակավայրերի ցուցադրութեամբ, յետոյ ցուցադրուեց հայերը բնաջնջելու թուրքական կառավարական հրամանի տեքստը, հնչեց Հիթլերի հանրայայտ խօսքերը, - հիմա ո՞վ է յիշում հայկական ջարդերը: Յուցադրուեցին նահատակուած ազգային առաջնորդներին, նախճիրից սահմուկեցուցիչ տեսարաններ:

Տպաւորիչ եւ ուսանելի էր նաեւ Արշակ Տիգրանեան վարժարանի տնօրէն Վարդգէս Գուրուեանի խօսքը:

Շնորհաւորում ենք եկրորդականի հայոց լեցուի ուսուցիչ Գրիգոր Սուքիասեանին այս յուզիչ յուշահանդէսի համար:

Տիգրանեանցի աշակերտները այս յուշահանդէսով փաստեցին, որ պիտի պայքարեն Հայ Դատի արդար լուծման համար, պիտի եւ պարաւոր են պահելու հայոց լեզուն, մշակոյթը, միշտ վառ պիտի պահեն հայ նահատակներու յիշատակը:

### ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՀՈԼՈՎՈՅԹՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 6-էն

զսպուածութեան» հարցերը որոշակիորէն անդրադառնում են երիտասարդի վարքի վրայ: Ինչպէս նշեցինք պարմանուհու ու պարմանի մօտ այսօր արագացուած են սեռական եւ հոգեբանական հասունացումը: Անցեալում դրանք տեղի էին ունենում 15 տարեկանից յետոյ: Այժմ աղջիկները սեռական հասունացման են հասնում նոյնիսկ 12 տարեկանում, իսկ տղաները 13: Անցեալում վաղ ամուսնութիւնը տարածուած երեւոյթ էր: Ամուսնանում էին 18-19 տարեկան հասակում: Սեռական հասունութեան եւ ամուսնութեան միջեւ ընկնում էր շուրջ 3 տարի: Իսկ այժմ երիտասարդները միտում են աւելի ուշ ամուսնանալ, 25-26-ից ոչ շուտ: Այս նշանակում է, որ անցեալում պարմանուհին կամ պարմանը ապրում էին «պարտադրուած սեռական զսպուածութեան» համեմատաբար աւելի կարճ ժամանակաշրջան (4-5 տարի) իսկ այժմ նրանք ստիպուած ապրում են այդպիսի աւելի երկար շրջան (8-10 տարի): Նկատի ունենանք նաեւ երեք չաւելեալ գործօններ եւս.

1. Այսօր, ի տարբերութիւն անցեալից, միջավայրը հեղեղուած է էրոթիքի բիւթերով, որոնք անընդհատ զրգուում են մարդկանց: 2. Երիտասարդները իրենց սեռական

առաւել զրգուածութեան վիճակը ապրում են 20-25 տարիքում, իսկ կանանց մօտ սեռական պահանջը աճում է 30-ից յետոյ: 3. Այսօր հրապարակուած կան աւելի շատ ամուսնալուծուած այնպիսի կանայք ու տղամարդիկ, որոնք ցանկանում են գործօն սեռական կապեր հաստատել:

Այսպիսով, ոչ միայն երկարում է «պարտադիր սեռական զսպուածութեան շրջանը», այլև այն դառնում է փորձութիւններով ու փորձանքներով լեցուն: «Պարտադիր սեռական զսպուածութեան» կոպիտ եւ յաճախակի խախտումները չլի են մարմնական, բարոյական եւ ընկերային բացասական հետեւանքներով: Սեռական սանձարկութիւնը կարող է հեշտութեամբ առաջնորդել դէպի զեխ, յանցագործ կեանք: Այն կարող է պատճառել ամուլութիւն, չբերութիւն:

Այսպիսով, մենք քննարկեցինք այն հարցերի մի մասը, որը արդիւնք լինելով արդի քաղաքակրթութեան զարգացման հետ միաժամանակ լուրջ փորձութիւններ են ստեղծում երիտասարդի համար: Մեր եկեղեցիների, դպրոցների, հասարակական կազմակերպութիւնների առաջնահերթ խնդիրն է օգնել մեր երիտասարդութեան, որպէսզի նա կարողանայ լուծել իր առաջ ծառայած խնդիրները:

### ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շարունակում է 7-էն

կ'ողբանք մեր 1.5 միլիոն նահատակներուն համար ու կը ցաւինք որ ցեղասպանութիւնը տակաւին ամբողջական ճանաչում չգտաւ, սակայն գիտակցելու ենք որ պատուական ցեղի մը կը պատկանինք եւ առաքելութիւնը ունինք հայկական ժառանգութիւնը պահելու, մեր հայրերուն հաւատքին կառչած մնալով, թէ՛ «ոչ մէկ բան կրնայ մեզ Քրիստոսի սէրէն բաժնել»:

Այնուհետեւ 7րդ կարգը խմբովին արտասանեց Մուշեղ Իշխանի «Հայ Մամիկին Աղօթքը»: 8րդ կարգի աշակերտներէն ոմանք ընթերցումներ կատարեցին անցեալի կամ ներկայի պետական դէմքերու խօսքերէն, ինչպէս Թալէաթ Փաշայի, Տօքթ. Նազըմի, Մորկընթաուի: Ապա 8րդ կարգը արտասանեց Վահագն Դաւթեանի «Ռէքվիէմ»ը: Կրէկըրի Ապաճեան կարդաց նախագահ Օպամայի Հայկական Յեղասպանութեան ճանաչման խոստումը՝ կատարուած 2008 Յունուարին, իսկ խումբը տպաւորիչ կերպով գոչեց «Պրն. Նախագահ, մենք կը սպասենք այդ ճանաչման»:

Աշակերտական երգչախումբ-

բը երգեց «Ով Կենդանի Հաւատք Մեր հարց», «Տէր Ողորմիա» եւ «Գովեա Երուսաղէմ»ը, որ Զատիկուայ երգ ըլլալով հանդերձ, յայտագրին մէջ դրուած էր, որովհետեւ ինչպէս Յիսուս Յարութիւն առաւ, քանի որ դեռ գործ ունէր կատարելիք աշխարհի երեսին, այնպէս ալ, հայ ժողովուրդը չարութիւն առաւ 1915ի եղեռնէն, քանի որ դեռ գործ ունէր կատարելիք համայն մարդկութեան համար:

Փակման խօսքը կատարեց պրն. Ինճէճիքեան, չիշելով Ա. Ահարոնեանի «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարդայ նախատինք» սողը՝ ան գնահատեց ելոյթ ունեցող աշակերտները՝ որոնք ուխտեցին Հայ Դատը աշխարհին ծանօթացնել, ու մաղթենք որ անոնք արդարութիւնը անպայման տեսնեն:

Ապա շնորհակալութիւն յայտնեց վեր. Յովսէփ Մաթոսեանին՝ օրուան պատգամին համար, յայտագրի պատասխանատու ուսուցիչներուն եւ մասնակցող աշակերտներուն:

Յայտագիրը վերջ գտաւ վեր. Մաթոսեանի օրհնութեան աղօթքով:

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ  
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահուորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քաքուղի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռավար*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



## ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ

### ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍԱՆԱԿԱՅՈՅՅԸ

**CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ  
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆՆՈՒ)**  
**GLOBACAST SATELLITE**  
**ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԵՐԵՎԱՆԻ «ՓԻԼԻԿ»Ը ՉՈՐՈՐԴ ԱՆԳԱՍ ԴԱՐՁԱԻ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԲԱԹԱԿԻՐ



Մայիսի 9-ին Երեւանի Վազգէն Սարգսեանի անուն «Հանրապետական» մարզադաշտում անցկացուեց Հայաստանի ֆուտբոլի գաւաթի 18-րդ խաղարկութեան եզրափակիչը: Պատուաւոր գաւաթի համար մրցեցին «Բանանց»ը եւ «Փիլնիկ»ը: Հանդիպման միակ գոլը գրանցուեց խփեց «Փիլնիկ»ի յարձակող Հենրիկ Մխիթարեանը: Սա «Փիլնիկ»ի չորրորդ յաղթանակն է Հայաստանի գաւաթի խաղարկութիւններում:

### ՖՈՒԹՊՈՒԼԻ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Մայիսի 10-ին կայացան Հայաստանի ֆուտբոլի բարձրագոյն խմբի աւազանութեան 7-րդ փուլի 2 հանդիպումները. «Արարատ»ը պարտուեց «Ուլիս»ին՝ 0-1, իսկ «Շիրակ» - «Գանձասար» խաղն աւարտուեց ոչ ոքի՝ 0-0:

Մայիսի 13-ին կը կայացան փուլի միւս 2՝ հանդիպումները: «Միկա» - «Փիլնիկ» մրցումը աւարտուեց 2-2 արդիւնքով, իսկ «Բանանց» - «Կիլիկիա», հանդիպումին յաղթանակ տոնեցին դաշտի տերերը՝ 3-0 արդիւնքով:



Մրցաշարային աղիւսակ	Խ	Յ	Ո	Պ	Գ	Մ
1. Փիլնիկ	7	6	1	0	17-2	19
2. Բանանց	7	6	0	1	11-4	18
3. Միկա	7	4	2	1	13-8	14
4. Ուլիս	7	4	1	2	7-5	13
5. Շիրակ	7	2	1	4	7-13	7
6. Կիլիկիա	7	2	0	5	6-11	6
7. Գանձասար	7	1	1	5	4-11	4
8. Արարատ	7	0	0	7	0-11	0

### ԱՐԿԱԴԻ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ.

#### «ԱՐԱՐԱՏԸ ԵՂԵԼ Է, ԿԱՅ ԵՒ ԿՄԱՅ ՈՐՊԵՍ ԶԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՐՅՐԴԱՆԻ»

ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ: «Արարատ» ֆուտբոլային ակումբում Մայիսի 13-ին հրաւիրուած մամուլի ասուլիսը նուիրուած էր ակումբի ֆինանսական կազմակերպչական հարցերին: Ասուլիսին ներկայ էին ակումբի ղեկավար, սփիւռ. քահայ Հրաչ Կապրիելեանը, փոխնախագահ Արկաղի Անդրէասեանը եւ այլ պատասխանատուներ:



Նախօրէին ՀՖՖ-ի նախագահ Ռուբէն Հայրապետեանը յայտարարել էր, որ «Արարատը» ֆինանսական խնդիրներ ունի, արտօնագիր չի ստացել եւ դրա պատճառով կարող է գրկուել Եվրոլիգայի մրցաշարի մասնակցութիւնից:

«Արարատի» ղեկավարութիւնը համապատասխան փաստաթղթերով հերքեց այդ յայտարարութիւնը: «Արարատի» ղեկավարութիւնը բողոքարկման բոլոր փաստաթղթերը ներկայացրել է համապատասխան ատենաներ, ըստ որոնց թիմը պէտք է մասնակցի Եվրոլիգայի մրցաշարին: Ա. Անդրէասեանը, ով ամենայն հաւանականութեամբ օրերս կստանան թիմի գլխաւոր մարզչի պաշտօնը, ասաց, որ «Արարատը» եղել է եւ կմնայ որպէս հայկական ֆուտբոլի խորհրդանիշ:

Այն դիտարկման առնչութեամբ, որ ՀՖՖ-ի նախագահը հրապարակաւ յայտարարել է, թէ ինքը մօտ օրերս «հաստատ ասֆալտի վրայ կսկսի» Հ. Կապրիելեանի գլուխը, վերջինս հեզմանքով ասաց, որ չի իջնի այդ մարդու մակարդակին եւ այդ առթիւ ոչինչ չունի ասելու:

## ԱՆԱՏՈՒԻ ՅՈՒՆԱՆԵԱՆԸ՝ ԴԱՐՁԵԱԼ ՔԻՔՐՈՔՍԻՆԳԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Մայիսի 10-ին Լեհաստանի Պլոցկ քաղաքում WKA-ի անցկացրած պրոֆեսիոնալ քիքթըսինգի մրցաշարում 72,5 քաշային կարգում հայազգի Անատոլի Յունանեանը 3:0 հաշուով Չախշախիչ պարտութեան մասնեց Լեհաստանը ներկայացնող յայտնի մարզիկ Լասզեկ Կոլտունին եւ պրոֆեսիոնալ քիքթըսինգի ասոցիացիայի գծով դարձաւ աշխարհի ախոյեան: Անջեկ օֆ ֆայրը մրցաշարում հնչեց Հայաստանի հիմնը եւ բարձրացուեց հայկական դրօշը: 27-ամեայ հայ մարզիկը յաղթանակը տօնեց քիքթըսինգի օրենստալ ձեւում՝ K1-ում: Յիշեցնենք, որ Չեխիայում բնակուող մեր հայրենակիցը քիքթըսինգի գծով Չեխիայի 10-ակի ախոյեան է եւ 2008-ին չեխական Օլիմպիկում անցկացրած քիքթըսինգի միջազգային ընկերութեան մրցաշարում հանդէս գալով Հայաստանի դրօշի տակ, դարձեալ դարձաւ աշխարհի ախոյեան: Շնորհաւորում ենք մեր հայերնակցին եւ մաղթում նոր յաղթանակներ:



### ՊԱՍՔԵԹՊՈԼ

#### Յ.Ե.Ը. «ԱՆԴՐԱՆԻԿ»-Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

Յաջորդաբար 7-րդ տարին եւ իր պատմութեան մէջ 10-րդ անգամ ըլլալով, Հ.Ե.Ը. «Անդրանիկ»-ի աղջիկները շահեցան աղջկանց պասքեթպոլի Լիբանանի ախոյեանութիւնը: Աւարտական հանգրուանի մրցումներուն, Հ.Ե.Ը.-ի աղջիկներուն մրցակիցը Հ.Մ.Ը.Մ. «Անթիլիաս»-ն էր:

Հ.Ե.Ը. երեք մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած էր (75-55, 62-49 եւ 70-63):

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ ժողովրդականութիւն վայելող Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին

Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ Երաժշտական Հաղորդումներ - Եւ այլն

Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----